

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՄԱՏԵԱՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գեղարվեստական երկի թարգմանությունը ամբողջական ստեղծագործության վերաբարձրությունն է մեկ այլ լեզվով, ինչպես նաև նույն լեզվի տարբեր ժամանակաշրջաններով: Լեզվի պարզական զարգացման հետևանքով հին հայերենը անհասկանալի է դարձել ժողովրդի համար: Այդ պարզաբանում էլ «Մապեան»-ի լեզվական կառույցներն անհասկանալի են աշխարհաբարով խոսողների համար, եւ թարգմանչի նպատակը պետք է լինի «ըստ հնարավորին՝ հակասություններից զերծ նկարագրությունը, արտահայտության եւ բովանդակության պլանների փոխհարաբերության ճշգրտումը, ժամանակակից մեթոդների կիրառումն ու դրանց կատարելագործումը»¹:

Թարգմանությունը բարդ գործընթաց է, քանի որ թարգմանիչը պետք է կարողանա ճիշտ վերաբարձրել երկն իր ժամանակի ընթերցողի համար: Վերջինսպետք է ընկալի ոչ միայն ստեղծագործության բովանդակությունը, այլեւ իր ժամանակի համար բերած նորությունը, որ իր արտահայտությունն է գտնում հենց նորաբանություններում: Գեղարվեստական երկի թարգմանչից պահանջվում է մյուս լեզվի միջոցներով առավել հարազատորեն վերաբարձրել գրողի գեղարվեստական մտածողությունը, բնագրի իմաստային նշանակությունը, բնագրի գեղարվեստական առանձնահատկությունները: Ինչպես ցույց են տալիս մեր կատարած ուսումնասիրությունները «Մապեան ողբերգության» աղյուսմատայանի նորաբանությունների բառակազմական եւ իմաստաբանական առանձնահատկությունների մասին, Գրիգոր Նարեկացին իր ժամանակի հայերենի փայլուն գիտական է ու խոսքի վարպետը, որի նմանների շնորհիվ զարգացել է լեզուն: Նենց այդ մեծության շնորհիվ է, որ նորաբանությունները գիտակցվել եւ յուրացվել են ժողովրդի կողմից՝ որպես առօրյա խոսակցական բառեր, եւ ենթարկվել են իմաստային տարբեր փոփոխությունների: Այս պարզաբանում չափազանց բարդ է թարգմանել Նարեկացու ստեղծագործությունները թեկուզ մայրենի լեզվի այլ տարբերակով: Մեկնաբան - թարգմանչի նպատակը պետք է լինի հասնել թարգմանության եւ բնագրային համարժեքության եւ ոչ թե բովանդակային վերաբարձրումը դարձնել բացատրամոլություն, որը զրկում է ընթերցողին սեփական հայեցողությամբ բնագիրը կարդալուց²:

Գրիգոր Նարեկացու «Մապեան ողբերգության» աղյուսմատայանի թարգմանությունների մասին ուսումնասիրություններ է կատարել արեւմտահայ լեզվաբան Հորոն³, որն իր աշխատության մեջ նշում է, որ «Նարեկը» այլեւս հայ երիտասարդի սեղանի գիրքը չէ, որի պարզաբանում «նուազեցաւ Նարեկին նախկին փառքն ու ժողովրդականությունը»⁴: Մրա

1 Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969, էջ 90:

2 Տե՛ս Ի. Լեւնի, Искусство перевода (пер. с чешского). М., 1974, էջ 169:

3 Տե՛ս Հորոն, Նարեկը եւ իր աշխարհաբար թարգմանությունը, Կ.Պոլիս, 1905:

4 Անդ, էջ 6:

հիմնական պատճառներից մեկը եւրոպական ժամանակակից գրականությունն է, մյուսը՝ գրաբարի չիմացությունը: Վերջին պատճառը գիտակցելով՝ պետք է արժեւորել այն մարդկանց ջանքն ու եռանդը, ովքեր հին հայերենից ժամանակակից հայերենի թարգմանեցին «Մարեանը»-ը: Վերջինիս բազմաթիվ թարգմանություններից ուսումնասիրել ենք Գարեգին եպիսկոպոս Խաչատրյանի, Վազգեն Գետրոյանի, Մկրտիչ Խերանյանի թարգմանած արեւելահայերեն եւ արեւմտահայերեն չափածո փարբերակները: Նրանք նշում են, որ ցանկացել են «Մարեան»-ը ժամանակակից ընթերցողին հասկանալի դարձնել՝ հարազատ մնալով Գրիգոր Նարեկացուն:

Այսպես՝ Վ. Գետրոյանը, քննելով Նարեկացու լեզվին եւ ոճին վերաբերող մի շարք հարցեր, հանգում է հետևյալ եզրակացության. «Թարգմանիչը ամենեւին չի մեղանչել բնագրի բովանդակության, էության դեմ, ընդհակառակը, այդ «հեռացմամբ» նա ոչ միայն ցանկացել, աշխատել է բարձրացնել թարգմանության բանաստեղծական հնչեղությունը, այլեւ, եթե կուգեք, առաջին հերթին, հենց հեղինակի մտքերը, ասելիքը առավել ճշգրտված, առավել որոշակի ու հստակ հասցնել ժամանակակից ընթերցողին»⁵:

Մ. Խերանյանը այս մասին գրում է. «Մենք ջանացել ենք մեր այս թարգմանության մեջ որքան հնարավոր է հարազատ մնալ մեծ բանաստեղծի ոգուն ու ոճին, փողին ու փառաշահությանը»⁶: Այս գործը լավ կատարելու համար պետք է Սուրբ Գրքերի խորունկ հմտություն, գրաբար լեզվի քաջ ծանոթություն, աստվածաբանական գիտության բավականաչափ պաշար:

Ըստ մեզ՝ «Մարեանի» գաղափարական բովանդակությունը ճիշտ ըմբռնելու համար շատ կարեւոր է հասկանալ նրա խոսքի էությունը, բառի արժեքը, որն իր ամբողջ ծավալով հանդես է եկել հասկապես նորաբանությունների մեջ: Գերազանցապես մեկական անգամ կիրառված նորաբանությունները հազվադեպ են մենիմաստ, Նայկազեան բառարանում դրանց իմաստներն արտահայտվում են մի շարք հոմանիշ բառերով, բառակապակցություններով: Նարեկացու ստեղծագործությունը թարգմանողների համար նորաբանությունների իմաստները ճիշտ արտահայտելը դժվար է, որովհետեւ դրանք մինչ այդ գործածություն չունեցող բառեր են եւ չեն կարող ուսումնասիրվել այլ երկերում: Ավելի ճիշտ կլիներ Նարեկացու լեզվին հավաստի մնալը, նորաբանությունների թարգմանությունն անաղարտ թողնելը, ինչպես իր թարգմանության մեջ վարվել է Գ. Խաչատրյանը. վերջինս Նարեկացու 1000-ամյակին նվիրված իր՝ թարգմանության ՆԵ գլխում նույնությամբ պահպանել է նորաբանությունները՝ երբեմն դրանք ներկայացնելով անվերջաժանցավոր հիմքերով, ինչպես «... **նոստրուսան** զուգակցութեանց» (Ն.Ն., 15) - «... **նոստրուս** զուգակցությունների (Ն.Ն., 14)»: Երբեմն էլ նորաբանությունները ներկայացրել է արդի հայերենին բնորոշ հոմանիշ հիմքերով, ինչպես՝ **երկր > հող. երկրասիրտարար** (Ն.Ն., 39) - **հողասիրտարար** (Ն.Ն., 38) եւ այլն:

Չիմնվելով առկա գրականագիտական եւ լեզվաբանական փորձի վրա՝ ուսումնասի-

5 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մարյան ողբերգության, Թարգմանություն Վազգեն Գետրոյանի, Երեւան, 1979, էջ 653: Այսուհետ այս գրքից մեջբերված փոոները կներկայացնենք Վ. Գ. համառոտագրությամբ:

6 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մարյան ողբերգության, Գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Երեւան, 1960, էջ 33: Այսուհետ այս գրքից մեջբերված փոոները կներկայացնենք Մ. Խ. համառոտագրությամբ:

րել եւ որոշակի ենթախմբերի ենք բաժանել նորաբանությունների թարգմանությունները՝ փորձելով դրանց հարաբերությունները բացահայտել ներշարահյուսական, կառուցվածքային եւ իմաստային հարկությունների փոխակերպական մեթոդներով: Բարդություններում բառաբաղադրիչները ոչ բոլոր դեպքերում են ժամանակակից հայերենի փարբերակներում պահպանվել իբրեւ մեկ ամբողջություն եւ հանդես են եկել առանձին՝ նույն կամ հոմանիշ բառերով, բառակապակցությամբ, նախադասությամբ, իսկ երբեմն էլ ընդհանրապես հանդես չեն եկել:

1. Նորաբանություններ, որոնք նույնությամբ են պահպանվել. սրանց բազմաթիվ օրինակներում առանձնանում են գրաբարաշունչ բառերը, ինչպես՝ ժամանակակից հայերենում **-արան** ածանցը հանդես է գալիս փեղանուն բառերի հետ, իսկ Նարեկացու սփեղծագործության մեջ այն նաեւ գործածվել է ածականների հետ (**լուռ, վստահ**), եւ այդ ձևերից **լուռան** նորաբանությունը պահպանվել է արեւելահայ թարգմանություններում, ինչպես «Ջորի **լուռանի** մկրացս ամփոփման մահնացս»⁷ - «...ամփոփված մկրիս **լուռանի** մեջ» (Վ. Գ., 543, Մ. Խ., 387):

Աշխարհաբար թարգմանություններում նույն ձեռով են պահպանվել նաեւ **յայրաւր** անգործածական եւ **կենն, աւրաւուր** գործածական հիմքերը, ինչպես՝ «Ակնս **յայրաւրաւուրն**» (467) - «**Յայրաւրաւուրն** աչք» (Բ. Ա., 140.): «**Ակնայայրաւր** պցուրթին» (435) - «...**ակնահայրաւր** պցուրնք» (Մ. Խ., 203, Բ. Ա., 118): «Մաւրամբդ **կենսաբաշխի**» (610) - «Մաւրովդ **կենսաբաշխ**» (Վ. Գ., 544, Բ. Ա., 228, Մ. Խ., 387): «**Աւրաւուրածին** ողբովք գոցման» (428) - «**Աւրաւուրածին** ողբերի գոցումով» (Բ. Ա., 114, Մ. Խ., 196):

Գրաբարյան ձեւն է պահպանվել նաեւ **ինքնոգոր** նորաբանության թարգմանության մեջ (կազմված «ուղիղ խնդիր + լրացյալ» ներշարահյուսական կաղապարով): Ժամանակակից հայերենում այս բառի սերող հիմքը պեղք է արտահայտված լինել փրականաձեւ հայցականով, ի փարբերություն գրաբարի, որտեղ հայցականն ուղղականաձեւ էր. «**Ինքնոգոր** մարպակից» (476) - «**Ինքնոգոր** ախոյան» (Վ. Գ., 350, Մ. Խ., 250, Բ. Ա., 146): Այս շարքում հետաքրքիր է **մեռաւրիկնակ** նորաբանության թարգմանությունը, որ արեւելահայ փարբերակներում հանդես է եկել **մահահանգոյն** գրաբարյան ձեռով, ինչպես՝ «Պահեա՝ ի փեղտոջ հանգստեան **մեռաւրիկնակ** այսր դադարման» (610) - «Պահպանիդ դու ինձ այս **մահահանգոյն** հանգստյան վայրում» (Մ. Խ., 388, Բ. Ա., 228):

2. Նորաբանություններ, որոնք արդիականացվել են.

ա) Նույն կազմությամբ նորաբանությունների «բաղադրական հիմքերի»⁸ փարբերակներով, ինչպես՝ «Ասուն կենդանեաց ի մեջ դալարոց Ծաղկածին վայրից **կենսածիր** բանից՝ թմրութեամբ մրաց ի յարաւսս մահու ճարակել» (481)⁹ - «Ասուն կենդանի լինելով հանդերձ, **կենսածիր** խոսքի դալար ծաղկածին արոտավայրում Մկրի թմրությամբ մահացու խոսքեր միայն ճարակել» (Վ. Գ., 357): «Կայսր **ոգեկործան**» (469) - «... կայսր **հոգեկործան**» (Վ. Գ., 307):

բ) Վերջածանցավոր նորաբանությունների անվերջածանց փարբերակներով, ինչպես՝

7 Գրիգոր Նարեկացի, Մաւրեան ողբերգութեան, Երեւան, 1985:

8 Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր եւ հայկական բառագիտություն, Երեւան, 1984, էջ 251:

9 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մաւրեան ողբերգութեան, Երեւան, 1985:

«**Զուգակցորդը** են միմեանց եւ զկնի երգեցեալքս» (490) - «Իմաստով միմյանց **զուգակից** են եւ երգերը հաջորդ» (Վ. Գ., 371):

գ) Անվերջաժանց նորաբանությունների վերջաժանցավոր փարբերակներով. սրա լավագույն օրինակը **յուսադիր** նորաբանությունն է, որը երեք թարգմանություններում էլ հանդես է եկել փարբեր ածանցներով եւ բառաբարդման եղանակներով, փարբեր խոսքիմասային պարկանելությամբ, ինչպես՝ «... Անյարմարագիր անձին **յուսադիր**» (456) - «... իր անձի համար հույժ կասկածելի **հուսադրությամբ**» (Վ. Գ., 318). «... Ոչ իրաւացի խօսքերով ինքզինք **յուսադրելով**» (Բ. Ա., 133)¹⁰, «... **հույս փալով** իրեն անհարմարագիր խոսքով այսպիսի» (Մ. Խ., 229):

դ) Ածանցավոր նորաբանությունների այլ ածանցավոր փարբերակներով՝ առանց խոսքիմասային փոփոխության, ինչպես՝ «Ի փիպն **սպարթոյն** կերպիւ վիշապի նմանեալ ցուցեր» (496) - «Յուպ - գավազանին, անշունչ, անկենդան՝ **Անթույն** վիշապի կերպարանք փվիր» (Վ. Գ., 379):

ե) Ածանցավոր նորաբանությունների այլ ածանցավոր փարբերակներով՝ ածական - բայ, գոյական - բայ, ածական - մակբայ խոսքիմասային փոփոխություններով, ինչպես՝ «**Անգարելի** դեղոց ջերմութիւն ի յերիկամանց մասունս երկակի» (346) - «Ջերմութիւնն՝ որուն դեղեր **չեն գօրեր**՝ երիկամունքս է լափեր երկակի» (Բ. Ա., 62): «Լքեալ զերկրայինն՝ յեղանակաւ իմն արիինակի նմանագիր **ձեռակերպութեան**» (322) - «Երկնայինը լքած՝ ես ինքս էլ **ձեռակերպեցի** խաչարառակ պարկերն Ղեւփանի աստղի» (Մ. Խ., 84) եւ այլն: «... **թափանցական խառնութեամբ** յաստուածութեանն» (548) - «**Թափանցօրէն խառնելով** ոգոյն հեքս աստուածային» (Բ. Ա., 235):

զ) Ածականի գերադրական եւ բաղդափական աստիճաններով արտահայտված նորաբանությունների բառակապակցություններով, բառաբարդմամբ, բառահափմամբ արտահայտված փարբերակներով, ինչպես՝ «Ով անձն իմ թշուառ, **ամենապարկառ**» (277) - «Ով անձն իմ թշվառ, **խապառ անպարկառ**» (Վ. Գ., 52): «Ոչ մոնչեցեր **ամենագղեցիկ** փողոյ մեծութեան»: (558) - «Չմոնչացիր, ո՛վ ամենացունց փողոյ **սահագնաձայն**» (Վ. Գ., 463): «Չըմոնչեցիր մեծ փողոյ **աշխարհալուր**» (Բ. Ա., 193): «Առ կենդանութիւն մեզ **անյուսագոյն**» (286) - «Ի՞նչն է մեզ համար **ավելի անհույս**, քան թե հավաքալ» (Մ. Խ., 44): «Յուցանել զդոյն ինձ դիւրինս եւ **հեշտականագոյնս**» (543) - «Այլ ինձի համար անհնար համարուած Բաները դիւրին ու **հեշտ** ցոյց փալով» (Բ. Ա., 189):

է) Նարածանցավոր նորաբանությունների ածանցավոր փարբերակներով, ինչպես՝ «Ըղձալի է եւ այս ընկանութիւն **մերձատրական** հոգետր հաղորդութեան» (489) - «Ըղձալի է եւ հոգետր հաղորդակցութեան **մերձատր** այն ընկանութիւնն» (Բ. Ա., 155):

ը) Ածանցավոր նորաբանությունների այլարմատ, նույնարմատ պարզ փարբերակներով, ինչպես՝ «Եւ ոչ ահեկիս՝ **պարածածկութիւն**» (518) - «Եւ ոչ էլ ձախով **վահան** կրեցի» (Վ. Գ., 415, Մ. Խ., 294, Բ. Ա., 174): «Նաստապետեցի **ըղձականութիւն** սողոմոնեան քանիս առակի» (347) - «Կատարուելով Սողոմոնեան **իղձն**» (Բ. Ա., 62):

թ) Ածանցավոր նորաբանությունների հարածանցավոր փարբերակներով, ինչպես՝ «Եւ **խնամիչ**՝ կարգաց հովովման արարածոց» (460) - «Արարածների փոփոխման կարգը **նա-**

¹⁰ Սուրբ Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Բունոս - Այրէս, 1948: Այսուհետ՝ Բ. Ա.:

խախնամում» (Վ. Գ., 324): Ինչպես փեսնում ենք, եթե **նախորդ** փարբերակում ամկա չէ խոսքիմասային փոփոխություն, ապա այսպեղ ամկա է ածական (սպորոգելի) - դիմավոր բայ (պարզ սպորոգյալ) խոսքիմասային հերթագայություն:

ժ) Բարդ նորաբանությունների այլարմար փարբերակներով, ինչպես՝ «Յայլ նմանության **բարեպափն** փեսողութեան» (498) - «Ջանազան **բարեվայելուչ** երեսյոներով շրջանակելու» (Բ. Ա., 161): «**Ահանկութիւն** խարդախմանց» (587) - «Խարդախութեանց՝ **ահարկու**» (Բ. Ա., 213) օրինակում բաղադրող հիմքերն իմաստային փոփոխության են ենթակվել. *անկանել* չեզոք սեռի բայի արմարը փոխարինվել է *արկանել* ներգործական սեռի բայի արմարով: «Մի թուեսցես ի ճիւղ **երկրասարկեղծ** մարանցո զգիստ գործոցս» (563) - «Մի թվիր **երկնասարկեղծ** մարներիդ ճյուղերի վրա՝ գործած մեղքերս» (Մ. Խ., 335): - «Մի՛ թուեր **երկնասարկեղծ** մարներուդ ծայրով կապարած գործերս» (Բ. Ա., 196): - «**Քո աշխարհասարկեղծ** մարների վրա Մի՛ հաշվիր արդյունքն արած գործերիս» (Վ. Գ., 471): Մ. Խերանյանը եւ Գ. եպս. Խաչատրյանը նորաբանության սերող հիմքը թարգմանել են հականիշ բառով, որից նորաբանության ներքին շարահյուսական կաղապարը՝ «ուղիղ խնդիր + լրացյալ», փոխակերպվել է «ներգործող խնդիր + լրացյալ» կաղապարի:

ժա) Բարդ նորաբանությունների՝ ածանցավոր, բարդ ածանցավոր փարբերակներով, ինչպես՝ «Յորժամ զամենայն արհամարհեսցէ եւ **սկզբնապարճառն** եղելոց միայն ընտրեսցէ» (489) - «Որ ամենայն ինչ արհամարհելով՝ Ընդունում է լոկ արարածների **նախապարճառին**» (Վ. Գ., 370):

ժբ) Ածանցավոր նորաբանությունների՝ բարդ, բարդ ածանցավոր փարբերակներով, ինչպես՝ «Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն արհնաբան **հրաշաւորական** Զվհարելոյս զսիրտ սփոփէ» (447) - «Ինչպէս է հարյուրեւերկուերորդ Սաղմոսն, օրհնաբան ու **հրաշագեղ**» (Վ. Գ., 303): «... յամրային **դարձաւոր**» (432) - «Նապաղ **դարձիկ**» (Վ. Գ., 276):

ժգ) Նամադրական բարդ նորաբանությունների վերլուծական փարբերակներով, ինչպես՝ «Ջառառմն սիրոյն եւ զհրային ջերմութիւն **ադուսկան** ախտին» (610) - «... հրաբորբոք ջերմութիւնը **ցոփ - ցանկական** ախտի հեպ» (Մ. Խ., 387)¹¹:

ժե) Նորաբանությունների՝ բառակապակցություն փարբերակներով, ինչպես՝ «**Պարմարանութեամբ** ըղձական ճառիւք կրիցն սարսափելեաց» (605) - «Քո սարսափելի չարաբանքների **Պարմության** թովիչ **ճառագրութեամբ**» (Վ. Գ., 537): Այս շարքում հեպաքրքիր կառույց է «**Ամենարոյս փշածին** բնութեանս» (302) նորաբանություններով ձեւավորված բառակապակցությունը, որի բաղադրող հիմքերը հանդես են եկել մեկ առանձին բառով, ինչպես՝ «... **ամեն փեսակ փշեր բուսցնող** բնության » (Մ. Խ., 61), «... **ամենագլի փուշեր բուսցնող**՝ Բնութեան » (Բ. Ա., 35): «**Ամենափեսակ փշեր բնձյուղող** Մեր այս բնության » (Վ. Գ., 89):

ժզ) Նորաբանություններով ձեւավորված բառակապակցությունների բարդ փարբերակներով, ինչպես՝ «Ըստ հոգեհանճար իմաստունյն **կանխազեկոյց առակի**» (566) - «Ըստ իմաստունի **կանխասացութեան**» (Վ. Գ., 474):

¹¹ Ադուսկան ածական - նորաբանությունը նույնպես երեք փարբերակներում թարգմանված է փարբեր կազմությամբ բառերով, ինչպես Վ. Գեորգյանը, պահպանելով նորաբանության ածանցումը, այն արտահայտել է հոմանիշ արմարով. «... **դարձիական** ախտի հրայրքներն անշեջ» (Վ. Գ., 544), Գ. եպս. Խաչատրյանը, նորաբանության հոմանիշ բառն ամփոփելով լրացյալի հեպ, կիրառել է իբրեւ գոյականի բառաբաղադրիչ. «Սառումը սիրոյն եւ **հեշտահպութեան** կիզիչ ջերմութիւնն» (Բ. Ա., 228):

ժե) Նորաբանությունների՝ կապական կառույց փարբերակներով, ինչպես՝ «**Կաթնաբոյժ** հասակաց» (371) - «Տակավին **ծծկեր** երեխաներին» (Մ. Խ., 138):

ժը) Նորաբանությունների՝ նախադասություն փարբերակներով, ինչպես՝ «... «Եւ **մշտամարտ** հանդիսիւ յատպարիզի կենցաղոյս» (578) - «Եւ զգաստութեամբ անգայթ, անպափիր, **Միշտ արիարար կովեցին** ընդդէմ Դժնի ու գոռոզ մարմնի բռնության» (Վ. Գ., 494): «Զոր ի **լռարանի** մտացս ամփոփման մահճացս անկողնի» (609) - «Ես ալ մահճիս մեջ՝ **ուր կր լռել միտքն** ու կ'ամփոփուի» (Բ. Ա., 228): **Լռարան** ածական-որոշիչ նորաբանությունը միայն արեւմտահայ փարբերակում է թարգմանված իբրեւ որոշիչ երկրորդական նախադասություն, իսկ արեւելահայ փարբերակներում նորաբանությունն իբրեւ փեղի պարագա է թարգմանված, ինչպես՝ «Մահճում, մտամփոփ **լռարանիս** մեջ Մտաբերելով հոսահատության պտուղները» (Մ. Խ., 387): Այս դեպքում թարգմանիչները փարբեր կերպ են ըմբռնել *ի* նախդիրի փեղը. չնայած նորաբանությունը բառարանում նույնպես ներկայացված է իբրեւ ածական: **Անամփոփելի** նորաբանությունը երեք փարբերակներում էլ թարգմանվել է իբրեւ որոշիչ երկրորդական նախադասության բաղադրյալ պտրոգյալ, ինչպես՝ «Եւ պարժատուր **անամփոփելի** ի քոյ փեսութեանց» (585) - «Արդ, պարժապարպիս, **որն անկարող է Թաքնվել** մեծիդ փեսությունից» (Վ. Գ., 506): «**Որ անկարող է պահել** քո փեսողությունից» (Մ. Խ., 362): «**Որ անկարող է պահուրսիլ** քու փեսութենեդ» (Բ. Ա., 211): **Աննուիրելի** նորաբանության թարգմանությունը թարգմանչի՝՝ նախադասությամբ վերլուծությունն է. «Նայցուած պղտոր եւ ձեռն անմաքուր **աննուիրելի**» (345) - «Նայուածքս է պղտոր, ձեռքս անմաքուր՝ **ձեռք մ' է այն պիղծի**» (Բ. Ա., 62):

ժթ) Նորաբանություններ, որոնք թարգմանվել են այլ բառաբաղադրիչներով՝ առանց բառակազմական փոփոխության, ինչպես՝ «Յոգի թախծութեան **յոգնամասնեայ** փարակուսանաց» (538) - «**Բազմափարակոյս** թախծալի հոգով» (Վ. Գ., 446): «Եւ **բազմապիսի** փարակույսներով լի փխտոր հոգով» (Մ. Խ., 317, Բ. Ա., 186): «Երկնաւոր **արքայուհի**» (570) - «Երկնի **թագուհի**» (Վ. Գ., 481):

ի) Նորաբանություններ, որոնք թարգմանվել են այլ բազմակի բառաբաղադրիչներով, ինչպես՝ «Ոչ ինչ յայսմ յանգոյ եւ **յանտաւորական** նմանութենէ» (544) - «Այս բոլոր չնչին **անկերպ, անորոշ եւ հույժ անկայուն** օրինակներից Ոչ մեկը...» (Վ. Գ., 456, Բ. Ա. 190, Մ. Խ., 323): «**Տարակորզեսցես** ի ձեռն ձեռինդ ամենակալի» (314) - «Քու ամենակալ եւ հըզօր ձեռքովդ **խրլես ու փրցնես**» (Բ. Ա., 42):

3. Նորաբանություններ, որոնք չեն արդիականացվել ընդհանրապես չթարգմանվելով, ինչպես՝ «Կցորդելով ընդ խնկազգեսփիցն **զուգամասնապէս**» (378) - «Խնկազգեստներու ընծաներուն դու կցորդէ՛ ու խառնէ» (Բ. Ա., 82): «Կորո՛ զգազիր, **թխափիպ** կրիցս ապականութեանս կարիս» (409) - «Կորցրո՛ւ ապական ցանկությունները զազիր կրքերիս» (Մ. Խ., 175): Սրանցից մի քանիսը ժամանակակից հայերենում չպահպանված **պարասխանարան, երկարաւոր** եւ պահպանված **բազմահատուած, թխափիպ, սպանդարան** նորաբանություններ են:

Նորաբանությունների թարգմանությունների փարբերակների ուսումնասիրությունը ցույց է փալիս, որ դրանք հանդես են գալիս հակադիր եզրերով: Դրանց մեջ բազմաթիվ են բառի՝ մի քերականական կարգից մյուսին անցնելու հիմքը՝ փրանսպոզիցիան, որը հանդես

է գալիս գոյականների ածականացումով, բայացումով եւ այլն: Այս երեւոյթը թարգմանություններում իրականանում է թե՛ վերջածանցումով, թե՛ դրա բացասումով, թե՛ կոնվերսիայով, թե՛ կապական կառույցներով, թե՛ բառակապակցությամբ եւ թե՛ նախադասությամբ:

Վերը նշված նորաբանությունները «Մապեան ողբերգության» մեջ կիրառվել են մեկ անգամ, սրանց հակադրվում են հանգուցային հաճախադեպ նորաբանությունները.

ա. Արինակություն նորաբանությունը փարբեր կառույցներում փարբեր խոսքի մասերով է թարգմանվել, ինչպես արեւմտահայերենում այն արտահայտվել է «դերբայ + կապ» կապակցությամբ. «Առ ժողովրդեանն **արինակություն**» (598) - «Յոյց փալու համար ժողովուրդին» (Բ. Ա., 220): Մյուս նախադասության մեջ նրա իմաստը արտահայտվել է **ալ** հավելական շաղկապով, ինչպես՝ «Սակայն եւ իմս **արինակություն** բանիս պարկերի ճարակեցելոյ Նարս կենաց կորուսեալս անձին Ոչ է այլայլեալ յարմարութենէ» (526) - «Անյարմար չէ, սակայն, որ ես **ալ** Այդ խօսքի իմաստը պարշաճեցենմ կորսուած հոգիիս՝ Որ կը փոշորի եւ կ'ըղձայ գտնել ապրելու հնարքներ» (Բ. Ա., 179): Թարգմանության այս փարբերակը հանդիպում է նաեւ Վ. Գետրգյանի մոտ. վերջինս հավելական շաղկապով թարգմանել է **օրինակություն** նորաբանությանը հոմանիշ **նմանագրություն** նորաբանությունը, ինչպես՝ «Մանաւանդ զի ոչ այսու եւեթ **նմանագրութեամբ** Կշռի» (422) - «Բայց այս **էլ** քիչ է արտահայտելու Տաժանավորիս վիճակը թշվառ» (Վ. Գ., 262):

Անսահմանելի նորաբանությունը նույնությամբ է պահպանվել, սակայն արեւելահայ թարգմանություններում՝ երկու բառակապակցություններում, հանդես է եկել **անհուն**, **անբավ**, **անծայր** հոմանիշներով, ինչպես՝ «Նրամայեա՛, գթած, խնամակալ, գովեալ, Լոյս անշիջանելի, զարութեամբ **անսահմանելեալ**» (564) - «Նրամայի՛ր, գթած, խնամակալ, գովյալ, լո՛յս անշիջանելի, Որ զորությամբդ **անհուն** նորոգվի հասարակարկես... » (Մ. Խ., 335): «Նրամայի՛ր քո զորությամբ **անբավ**, Բարեգութ՛ք, գովյալ եւ խնամակալ» (Վ. Գ., 472): «... փէրութիւն **անսահմանելի**» (357) - «Տերություն **անծայր**» (Վ. Գ., 172): «Անբաւ մեծութեամբ եւ իմաստութեամբ **անսահմանելեալ**» (408) - «Քանզի քո անբավ մեծությամբ եւ իմաստությամբ **անհուն**» (Մ. Խ., 174):

Այսական նորաբանությունն արեւելահայ թարգմանությունների մեջ հանդես է եկել **դու**, **դիվական** բառերով, իսկ արեւմտահայ թարգմանության մեջ բառարմարը նույնն է մնացել: «Պնդին ի մեփաղս ահեղ հրամանիդ **այսականացն** գումարք» (609) - «**Դեւերը** պրկվում ահեղ հրամանիդ մեփաղների մեջ» (Մ. Խ., 386): «**Դիվականները** պրկվում են ահեղ Նրամաններիդ արգելաններում» (Վ. Գ., 541): «Նրամանովդ ահեղ՝ ջոկերն **այսերուն** մեփաղներու մէջ պինդ կը պրկլին» (Բ. Ա., 227): «Եթէ սպառազենք **այսական** դժնեայ հնարատրութեամբ» (604) - «**Դիվական** դժնյա հնարքներով սպառազինված» (Մ. Խ., 381): «Լինեն դրանք թե՛ նենգ, չարահնար, դժնի զենքերով սպառազինված խոլ մարտիկների գնդեր **դիվական**» (Վ. Գ., 534): «Ըլլան անոնք **այսական** դժնեայ նենգամըմքութեամբ» (Բ. Ա., 224): Այս կառույցում նկատելի են նաեւ նորաբանության լրացյալների փոփոխություններ, որոնցով թարգմանիչները փոխել են Նարեկացու միտքը, որը, ըստ մեզ, արդարացված չէ:

Գոհարանություն (579, 574, 601, 455) բառը կիրառվել է ուղղական, սեռական եւ գործիական հոլովներով. աշխարհաբար թարգմանություններում էլ այն պահպանել է իր ձեւը,

միայն երբեմն հանդես է եկել իբրեւ ածական, քանի որ «գրաբարում հաճախ ածականը սպանում է **-ութին** ածանցը՝ վերածվելով վերացական գոյականի»¹²: Այս բառերը ժամանակակից հայերենում թարգմանվում են որպես ածական: Այսպես են իրենց թարգմանությունների մեջ **«գոհաբանություն»** բառաձեռն արտահայտել Վ. Գետրգյանը եւ Գ. եպս. Խաչատրյանը, ինչպես՝ «Արդ, ընդ **գոհաբանության** ծայնիցն Խնդրումածոց անմահականացն վեհից» (574) - «Վեհ անմահների **գոհաբանական** խնդրանքների հետ» (Վ. Գ., 488): «Փա՛ռք եւ պաշտան **գոհաբանության** յաւիտեանս» (601) - «Կը վայելեն փառք, **գոհաբանական** պաշտոն՝ յաւիտեանս Ամէն» (Բ. Ա., 222): Այս նորաբանությունը Մ. Խերանյանը միշտ նույնությամբ է պահպանել, ինչպես՝ «Ոչ առաքին այտոցիկ քրքրեցմունք, Այլ անլուծի **գոհաբանությիւնը**» (579) - «Այլ անլուծի **գոհաբանություններ** են առաքվում քեզ» (Մ. Խ., 355): «Փա՛ռք եւ պաշտան **գոհաբանության** յաւիտեանս» (601) - «Փա՛ռք եւ պաշտոն **գոհաբանության** Նավիդյանս» (Մ. Խ., 378):

Նարեկացի բանաստեղծի նորաբանությունների թարգմանության մեջ կարեւոր է նաեւ հանգուցային հիմքերի պահպանելը, որոնք (**ինքն, քո, կերպ, ձեռն, բազում, բարի**), ինչպես պարզեցիկ դրանց ներշարահյուսական կաղապարները ուսումնասիրելիս, սերող հիմքեր են եւ ժամանակակից քարքերակներում ամենափարքեր արտահայտություններ ունեն:

ա. Ինքն ուղղական հոլովով արտահայտված հանգուցային սերող հիմքն արեւմտահայ քարքերակում արտահայտվել է ինչպես առանձին բառերով՝ առաջին դեմքի սեռական հոլովածեղով, նույն դերանվան դիմորոշ հոդով, կրկնավոր քարքերակով, այնպես էլ բաղադրիչ հոմանիշ բառով՝ **անձն**, ինչպես՝ «Զայս կսկծեցուցանող **ինքնաբանական** նախափինս» (536) - «Անխափալ եւ երկայնամիտ, **իմ բերնէս ելած** կսկծեցնող այս նախափինքներն» (Բ. Ա., 185): «Ընդ հին չարութեանցն նորոգ **ինքնաստեղծութիւնս** գրի» (322) - «Շին չարությունների վրա **ինքս** նորերն **ստեղծեցի**» (Մ. Խ., 84, Բ. Ա., 47): «Եւ **ինքնահարուած** փանջանատրոյիւնը» (351) - «Եւ այն փանջանքներն՝ որոնցմով **ինքզինքրս կը հարուածեմ**» (Բ. Ա., 65): «Եւ քանզի եւ ինձէն անձամբ իմով **ինքնագրաւ** ի մահ» (324) - «Որովհետեւ եւ ինքս անձամբ եղայ մահուան **անձնափոր**» (Բ. Ա., 49): Վերջին նորաբանության սերող հիմքը Վ. Գետրգյանի թարգմանության մեջ արտահայտվել է առանձին բառերով, ինչպես՝ «Արդ, որովհետեւ անձամբ **ինքս ինձ մափնեցի** մահվան» (Վ. Գ., 122): *Ինքն* սերող հիմքը Մ. Խերանյանի թարգմանություններում անփոփոխ է հանդես եկել՝ բացառությամբ **ինքնաթոյն** նորաբանության, որի սերող հիմքը թարգմանիչը ուղղակի չի թարգմանել, ինչպես՝ «Խոսիս խայթողականս, **ինքնաթոյնս**, ընդարմացուցիս» (584) - «Խայթող, **թունավոր** եւ թմրացուցիչ խոսեր» (Մ. Խ., 360): Մյուս դեպքերում *ինքն* սերող հիմքը պահպանվել է կա՛մ կրկնված, կա՛մ հոմանիշ բաղադրող հիմքերի հետ, ինչպես՝ «.... **ինքնակշտամբելի** դեգերեալ» (362) - «**Ինքնապարսաւ** դեգերող» (Բ. Ա., 72): «**Ինքնանարգելի** հապաղկութ» (Վ. Գ., 181): Իսկ **ինքնագրաւ** նորաբանության բաղադրող հիմքը Մ. Խերանյանի եւ Գ. եպս. Խաչատրյանի թարգմանություններում հանդես է եկել *կամ* բառով, Վ. Գետրգյանի թարգմանության մեջ՝ *դար* բառով, ինչպես՝ «Իբր ի վերայ **ինքնագրաւ** կորստականի» (432), «....իրար հակադիր **ինքնակամորեն** կորստյան համար» (Մ. Խ., 200), «Եվ նրա մասին, իբրեւ **ինքնադար** կորստական» (Վ. Գ., 206), «Իբրեւ **ինքնակամ** կորստածի վրայ» (Բ. Ա., 117):

12 Ն. Մ. Ավետիսյան, Ռ. Մ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 148:

բ. Քո սեռական հոլովով արքահայրված հանգուցային սերող հիմքն արեմքահայ փարբերակում արքահայրվել է ինչպես առանձին բառերով՝ երկրորդ դեմքի սեռական, բացառական եւ գործիական հոլովաձեւերով, այնպես էլ նույն դերանվան դիմորոշ հոդով, ինչպես՝ «Պարարագեալ **քոյինանիւթ** զանգուածոյ նշխարաւոյ կենաց լուսոյ» (457) - «**Եւ քո իսկ մարմնով**՝ լուսեղեն կյանքի նշխարովդ դու պարարագվեցիր» (Մ. Խ., 229): «**Եւ քո ձեռքովդ** իսկ զանգած մարմինովդ» (Բ. Ա., 104): «**Չյոգնահաւաք** աւանդս ուղղութեան **քոյինակրան** լծոյդ քաղցրութեան» (379) - «**Քո դրած** քաղցր եւ արդար լուծի օրենքներն համակ» (Մ. Խ., 147, Վ. Գ., 207, Բ. Ա., 872), «...ընդ անհուն ասպարէզս **քոյինաշունչ** կրակարանաց» (386) - «...անհուն ասպարէզներով **Քեզնից ներշնչված** կրակարանների» (Մ. Խ., 151): «**Քեզնով ներշնչված** կրակարանի» (Վ. Գ., 212): «Ըստ **քոյինաշունչ** Գրոյն յուսադրութեան» (600) - «Ինչպէս **քենէ ներշնչուած** գիրքերը կը յուսադրեն» (Բ. Ա., 221): «Ըստ **ներշնչումովդ** գրված գրքերի հուսադրության» (Մ. Խ., 377): Այս հիմքով հորինված նորաբանություններից նույնն են մնացել **քոյինաստեղծ** (580), **քոյինանիւթ** (457) բառաբարդումները:

գ. Կերպ հանգուցային հիմքը նույնպես փարբեր արքահայրություններով է թարգմանվել, նույնությամբ պահպանվել են **ձեռակերպություն** (609) (Մ. Խերանյանի փարբերակում), **անկերպագրելի** (353), **կերպառություն** (496) (Վ. Գետրգյանի փարբերակում) եւ **կերպաւորել** (391) նորաբանությունները: Վերջինս «**Կերպաւորեցա՛ր**, անորա կ» արքահայրության մեջ երեք թարգմանիչների փարբերակներում էլ հանդես է եկել նույնությամբ, իսկ «Ո՛վ ոք զաներետոյթսն **կերպաւորեաց**» (361) արքահայրության մեջ հանդես է եկել երկու փարբեր հիմքերով, ինչպես՝ «Ո՛վ աներետոյթները **պարկերացրեց**» (Մ. Խ., 128): «Աներետոյթները **երեւակայեց**» (Վ. Գ., 179): «Ո՛վ անյայտներն **երեւակայեց**» (Բ. Ա., 71): **Կերպադրություն, անկերպագրելի, ձեռակերպություն** նորաբանությունները թարգմանվել են հոմանիշ **եղանակ, ձեւ** բառերով, վերջինս հանդես է եկել եւ իբրեւ բառ, եւ իբրեւ բառաբաղադրիչ, ինչպես՝ «Եւ այս են պարկանեալ թախծականացն **կերպադրութիւնք**» (345) - «Այս է յարմար **ձեւ** թախծագրութեան» (Բ. Ա. 61,): «Այս է **եղանակն** ամենահարմար թախծությունը մեր նկարագրելու» (Մ. Խ., 109): «Այս **եղանակը** հարմար է թախծի պարկերման համար» (Վ. Գ., 152) «Թե՛ **զանկերպագրելին** չիշտարակելի» (353) - «Թե ոչ անոնք որ **ձեւ չունենալով**՝ չեն յիշուիր անգամ» (Բ. Ա., 66): «Նայեցեալ ի կրանս զգեստուս **բարեկերպութեան**» (586) - «Կրոնավորիս զգեստիս **բարեձեւությանը** նայելով» (Մ. Խ., 362, Վ. Գ., 507, Բ. Ա., 211): «Երդոցն պահպանարան քառակերպիդ **ձեռակերպութիւն** եղիցի» (609) - «**Չեւացումը** քառակերպիդ՝ թող պահպանարանն ըլլայ երդիքիս» (Բ. Ա., 227): Վերջին օրինակում, ինչպես րեսնում ենք, նորաբանության բաղադրիչ հիմքերը հանդես են եկել մեկ ամփոփիչ հիմքով: Կերպ հիմքի՝ հոմանիշով թարգմանությունների մեջ առանձնացրել ենք **կերպառություն** նորաբանությունը, որպէս սերող հանգուցային հիմքը թարգմանվել է բազմակի անդամներով Մ. Խերանյանի եւ Գ. Եպս. Խաչատրյանի փարբերակներում, ինչպես՝ «Որ զանկենդան ցուպ գաւազանին, **Ի կերպառութիւն** առ ի զքոյ մերովս նկարագրիլ» (496) - «Անկենդան գավազանին անթոյն վիշապի **նմանություն ու փիպ** քվեցիր» (Մ. Խ., 271, Բ. Ա., 159):

Ձեռն սերող հիմքը ավելի հաճախ է կիրառվել հոմանիշ բաղադրող հիմքերի հետ, ինչ-

պես՝ «Ուր ոչ է քղանցք **ձեռաստեղծական** վերաբերողի ծործոյ» (312) - «Ուր չկա քղանցք **ձեռագործ** վերաբերողի» (Մ. Խ., 72, Վ. Գ., 104, Բ. Ա., 41): «Տեսուչ, **ձեռն-կալ**, հասարիչ» (351) - «.... Կեսուչ, **ձեռնփու**, արարիչ» (Բ. Ա., 65): «**Ձեռնկալ** կենաց՝ հերքելոյս» (360) - «Կյանքի **ձեռնփու**՝ վարարվածիս» (Մ. Խ., 126, Բ. Ա., 70) կամ հոմանիշ բառակազմական կաղապարներով, ինչպես՝ «Յանդիման եղեալ **ապաձեռն** անթոշակութեամբ» (401) - «Երբ ես երկնայնիդ բարերարությանը ներկայանամ **ձեռնունայն** եւ անպաշար» (Մ. Խ., 165, Բ. Ա., 97, Վ. Գ., 231): «Երկայն ուղեւորութեան **ապաձեռն** անթոշակութիւնս» (337) - «Երկայն ու **ձեռնունայն**, անպաշար ուղեւորություն» (Մ. Խ. 100, Բ. Ա. 537, Վ. Գ. 141): «Անթոշակ **ապաձեռնութեամբ** ընդ անկապար ուղին հեքեկել» (580) - «Որ ես անվաստակ **ձեռնունայնությամբ** Անցնեմ այս կյանքի թերավարք ուղին» (Վ. Գ., 497, Մ. Խ. 355): Ինչպես Կեսանում ենք, վերջին նորաբանությունը նշված կապակցությունների մեջ բոլոր թարգմանություններում հանդես է եկել նույն ձեռով: **Ձեռն** հիմքով կազմություններում նույնպես հանդիպում ենք հոմանիշ, բազմակի եւ բառակապակցություն փարբերակների, ինչպես՝ «**Անձեռնկալ** կապեալ՝ եղկելիս ի փարակոյսի» (345) - «Անկոյս մռայլը չարափես աչքիս առջեւ կփռվի **Անօգ, կապկապյալ** եղկելիս մաքունվել եմ փարակոյսի» (Մ. Խ., 109), «**Լքուած ու կապուած** եղկելիս մաքունուեր եմ փարակոյսի» (Բ. Ա., 62), «Տարակոյսներով **անօգ կապկալված**» (Վ. Գ., 153):

Ե. Բազում - Բազմապարկառ, բազմասահ, բազմավրանգ նորաբանությունները մասնապետով՝ թարգմանիչները դրանք ներկայացրել են առանձին բառակապակցություններով՝ հոմանիշ **խիստ, հույժ, անթիւ եւ ամոռ, գայթ, ծեծկ** բաղադրիչներով, ինչպես՝ «Զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս **բազմապարկառ**» (479) - «Ինչպե՞ս պիտի նույն գովությունը քեզ կրկնեմ վերսփին աղաչավորս **խիստ ամոռապարք**» (Մ. Խ., 253): «Ինչպե՞ս կրկնեմ նույն գովեսքները քեզ աղաչավորս **հույժ ամոռապարք**» (Վ. Գ., 353): Արեւմտահայ փարբերակում նորաբանության սերող հիմքի իմաստը չի արտահայտված, ինչպես՝ «Ի՞նչպես դարձեալ նոյն գովութիւնը պիտի կրկնեմ ես աղօթաւորսս **ամօթահար**» (Բ. Ա., 117): «Թե՛ **գրազմասահ** շարժութեանցն» (353) - «Շարժումներն **անթիւ գայթ ի գայթ**» (Բ. Ա., 66): «Եւ քանզի ի ծուփս **բազմավրանգս** ալեքանջ հողմոյ սաստկապէս զգուեալ» (461) - «Ինչպես ոմն, որ հողմակոծ ծովի ծփանքների մեջ **սաստկապէս ծեծկված**» (Մ. Խ., 234): **Բազում** հանգուցային սերող հիմքը գիտակցվել է նաեւ իբրեւ գերադրական աստիճանի ցուցիչ, ինչպես՝ «Աւժանդա կ լեր փկարութեան **բազմափխուրս** փարփամութեան» (610) - «Օժանդակ եղի՛ր՝ **ամենափխուր** փարփամությամբ փկարացածիս» (Մ. Խ., 387), «Օգնութեան հասի՛ր **ամենափրխուր** փարփամութեամբ փրկարացածիս» (Բ. Ա., 228): Կան նորաբանություններ էլ, որոնց թարգմանություններում հանգուցային հիմքը չի թարգմանվել, այլ ամբողջ նորաբանությունը հանդես է եկել մի նոր բառով, ինչպես՝ «Քեզ՝ իրաւունս **բազմարժանիս**» (320) - «Քեզ իրավունք՝ **արժանավայել**» (Վ. Գ., 117): «Եւ արա՛ւ անդորր հանգստական դիրաւոր ի **բազմափազնապս** հեծութենէ» (604) - «Եւ ազապի ի ինձ հեծեծանքներից այն **դառնակսկիծ**» (Վ. Գ., 534): «Զիա՞րդ **գրազմայածեան** լեզուս ի յարինեալս բան մխեցից» (482) - «Ի՞նչպես թաթախեմ **թափառող** լեզուս օրինյալ խոսքի մեջ» (Մ. Խ., 257): Մի շարք նորաբանությունների մեջ էլ հանգուցային սերող հիմքը՝ իբրեւ առանձին բառ, հանդես է եկել նույնությամբ հոմանիշ բաղադրող հիմքի հետ, ինչ-

պես՝ «Իբր զճրագ **բազմաբերանեան**» (424) - «....իբրեւ ճրագ **բազմականթեղյան**» (Մ. Խ., 192): «Ինչպես **բազմաճյուղ** մի կանթեղ» (Վ. Գ., 265): «**Զբազմարկածեան** ուղտյն զանգերձ ընթացիցն» (538) - «Եվ րագնապահար մտքիս րեսությամբ աչքիս դեմ բերեմ **բազմավրանգ** ու անճողոպրելի, անխոսափելի ընթացքիս ուղին» (Վ. Գ., 446): Վերջին օրինակում հոմանիշ բաղադրող հիմքով թարգմանությունն ինքնին նորաբանություն է: «Յուցից առ սմին **բազմաբոյլ** բռնութեան մարտակցացոյ» (271) - «Ապա, ես այսպեղ այդ **բազմամրոխ** ու հզոր մարտիկների դեմ ցույց պիտի րամ» (Մ. Խ., 28): «Ի **բազմագթելին** դարձաւորութիւն Ատուրն պարկերի զղջման մեղատրին» (364) - «Որը, մի օրում **բազմաթիվ անգամ գայթեղով**, վերջապես դարձի կգա զղջացած» (Մ. Խ., 130): «Որ մէկ օրուան մէջ **բազմիցս գրթեղով**՝ վերջապես դարձի կուգայ զղջումով» (Բ. Ա., 73): Այս նորաբանության սերող հանգուցային հիմքը, նույնությամբ պահպանվելով Վ. Գետրգյանի թարգմանության մեջ, կիրառվել է հոմանիշ բաղադրող հիմքի հետ. «Այն մեղավորի հանդէպ **բազմագայթ**, Որը զղջումով դարձի էր գալիս» (Վ. Գ., 183): Վերջին օրինակի թարգմանության մեջ նորաբանության հիմքերը պահպանվել են նույնությամբ. *գթ* բաղադրող հիմքի անհնչյունափոխ ձեւը այս դեպքում լինում է *գայթ*. վերջինս հայերենի շեշտափոխական հնչյունափոխության մեջ բացառիկ երեւոյթ է, քանի որ *այ* երկհնչյունը, լինելով կայուն, չի հնչյունափոխվում գրական հայերենում, միայն ժողովրդախոսակցական լեզվում է հնչյունափոխվում *է*-ի, ինչպես՝ *փայլր - փէր, գայլ - գէլ, մայր - մէր*:

զ. Բարի - Բարեհռչակեալ նորաբանությունը մասնաւորով՝ թարգմանիչ Մ. Խերանյանը հանգուցային սերող հիմքը ներկայացրել է մի ամբողջ բարդությամբ, իսկ Վ. Գետրգյանը դրա իմաստը չի պահպանել եւ նորաբանությունը ներկայացրել է բոլորովին այլ մտքացումով, ինչպես՝ «**Բարեհռչակեալ**՝ լուսատրեսցին» (279) - «.... **բարեբանվելով՝ Պիտի պսակվի**» (Մ. Խ., 37), «**Յուցադրվելով պիտի հռչակվի**» (Վ. Գ., 56): Այսպես՝ նաեւ **բարեզգեստ** նորաբանության թարգմանությունը. Վ. Գետրգյանը, նորաբանության ընդհանուր իմաստից ելնելով, բոլորովին այլ բազմակի բառերով է այն թարգմանել, ինչպես՝ «Այցելութեանց՝ բարեզգեստից դիպողութեանց» (256) - «Նվիրյալներին, **զգաստ ու պարկեշտ**» (Վ. Գ., 22): Մյուս նորաբանությունների **բարի** հանգուցային հիմքը թարգմանություններում նույնն է մնացել՝ երբեմն հանդես գալով հոմանիշ կամ այլ բաղադրող հիմքերի հետ, ինչպես՝ «.... **բարեհրաման** քո ակնարկութեամբ» (294) - «**Բարեհաճ** իր **հրամանով**» (Վ. Գ., 76): «Յայլ նմանութիւն **բարեպարեհ** րեսողութեան» (498) - «Զանազան **բարեվայելուչ** երեւոյթներով շրջանակելու» (Բ. Ա., 163): Ի րարբերություն վերելի կապակցության՝ նորաբանությունը նույնությամբ հանդես է եկել Վ. Գետրգյանի թարգմանության մեջ. «Վայելանքն իր **բարեպարեհ**» (Վ. Գ., 382) եւ առանձին բառակապակցությամբ է հանդես եկել Մ. Խերանյանի թարգմանության մեջ, ինչպես՝ «Յուրաքանչյուրն իր ժամանակին, **բազմապիսի գեղեցկությամբ**» (Մ. Խ., 273): Բառակապակցությամբ է հանդես եկել նաեւ **բարեշնորհութիւն** նորաբանությունն աշխարհաբար երեք թարգմանությունների մեջ. «Արդ, այդ գումարպակ վերադասեցեալ **բարեշնորհութեան** Քոցոյ պարգեւաց առ իմս երախտիս» (399) - «Եւ արդ, թեպէտեւ իմ **բարու համար քո ինձ շնորհած** վերոհիշյալ պարգեւներից շարքէրն այսպեղ ես գրի առա» (Մ. Խ., 163): «Թէ եւ **բարիքիս համար քու շնորհածդ** Վերն յիշարակուած պարգեւներէն շարքիցեր գրի առի» (Բ. Ա., 96): «Արդ, թեպէտեւ ինձ

բարերարելու համար շնորհած Նիշյալ բազմակոյտ պարզեւներից քո Քչերը այսպեղ հիշարակվեցին» (Վ. Գ., 228):

Նամամիք ենք Ռ. Յակոբսոնի այն կարծիքին, որ «թարգմանության ընթացքում կարարվում է ոչ միայն որոշակի կողային միավորների մեկ առ մեկ փոխադրումը մյուսով, այլեւ ընդհանրական ասույթի հաղորդման փոխարինումը մյուսով»¹³: Այնուամենայնիվ, մենք նորաբանությունները զուր կողային միավորներ չենք համարում, որովհետեւ դրանք իրենց ներսում բարդ ձեւաբանական, շարահյուսական եւ ոճաբանական, մի խոսքով՝ քերականական բովանդակություն ունեն եւ ասույթներ են, որոնք ուսումնասիրել ենք փեքսպի մեջ, որպեղ ավելի ակնհայտ են նորաբանությունների թարգմանությունների արարքեր առանձնահատկությունները, սպեղծման նպարակները եւ պահանջները, որոնք Շվեյցերը դրանք համարում է կանխաենթադրություններ, խոստղի *ևս*-ի դեր եւ հանրույթներ, որոնց ճիշտ ըմբռնումից հանգում ենք րվյալ փեքսպի ժանրային ճիշտ պարկանելության ըմբռնման¹⁴: Այս պարճառով էլ մեր ուսումնասիրություններում ուշադրություն ենք դարձրել արարքեր եւ նույն շարահյուսական կիրառություններով նորաբանությունների, դրանց րացում- րացյալների թարգմանության բառակազմական արվեստին:

13 **Р. Якобсон.** О лингвистических аспектах перевода. “Вопросы теории перевода в зарубежной лингвистике”. М., 1978, с. 18.

14 **А. Д. Швейцер,** Теория перевода: Статус, проблемы, аспекты, М., 1988, с. 42-67: